ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 33. «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ»

1

IV դ. 2-րդ կեսին Վոլգայի և Դոնի տարածքներում կազմավորվեց հոների ցեղախումբը: Հոները Կենտրոնական Ասիայից եկած եկվորներ էին, որոնց էթնիկական պատկանելությունը լիարժեք լուսաբանված չէ: Որոշ հետազոտողներ նրանց դասում են թյուրքական ծագում ունեցող ցեղերի թվին, ոմանք էլ՝ մոնղոլական: ***Հոները վաչկատուն*** անասնապահներ էին: Ըստ IV դ. հռոմեացի պատմիչ Ամիանոս Մարկելիանոսի՝ նրանք ծանոթ չէին հողագործությանը, և նրանց մոտ թույլ էր զարգացած արհեստագործությունը: Նրանք ապրում էին տոհմացեղային կարգով:

Հոն ռազմիկ